

ւետարանին սրբոյ. եւ դի՛ր զմատանին, զգծած խաչի քո, ի մատին աջոյ ձեռին մերոյ, որով կնքեալք¹ զբոլոր անդամս մեր՝ սարսեալ բանսարկուն փախիցե ի մէջ: 12 Եւ որպէս հեղեր դու զարիւնդ քո սուրբ ի վերայ մեղաւորաց, ի փրկութիւն յանցաւորաց՝ պարգեւեա՛ եւ մեզ հեղուլ զարիւնս մեր ի վերայ խոստովանութեանս այսորիկ եւ իւրաքանչիւր թողութեան մեղաց: 13 Եւ որ ոք հեռացեալ յուխտե երդմանցս այսոցիկ ցուցցի ուխտագանց եւ ի միաբանութենէս² մերմէ որոշեսցի՝ ելցէ նա արտաքս ընդ Յուդայի, որ մերժեալ ընկեցաւ ի գնդէ սուրբ առաքելոցն, եւ առանց ամենայն թողութեան կացեալ ի ձախու կողմանն՝ լուիցէ ի քէն զահագին բարբառն, զոր ասես յաւուրն հատուցման, թէ *Երթա՛յք յիսնէն, անիծեալք, ի հուրն յաւիտենից, որ պատրաստեալ է սատանայի եւ արբանեկաց նորա*^Բ:

14 Եւ ասացեալ զամենայն խոստովանութիւն զաւրինութեանն եւ զանիծիցն միաբանութեամբ ամենայն բազմութեանն ի ձայն մեծ արանց եւ կանանց՝ հնչեաց երկիրն ամենայն ի բարբառոյ զաւրացն բազմութեան: 15 Եւ գրեալ զայս ամենայն բանս հաւատոյ ուխտին, եւ կնքեալ նախ մատանեալ իշխանին Սիւնեաց Վասակայ եւ ապա մատանեալք ամենայն տանուտերացն³ Հայոց եւ աւագ սեպիացն, եւ եղեալ ի սուրբ Աւետարանի երդմանն՝ ետուն ցպատուական եպիսկոպոսն⁴ եւ ցաւագ քահանայութիւնն որ էին անդ: 16 Եւ կատարեալ զայս ամենայն այսպէս՝ դիմեցին մեծաւ ցնծութեամբ եւ հոգեւոր երգովք ի տուն Տեառն, եւ երկրպագեալ միոյն միայնոյ ճշմարտին Աստուծոյ՝ լի անձկով եւ յերկար եւ անձանձրոյթ ծունդորութեամբ կատարեցին զաղալթսն:

17 Եւ արձակեալք յաղալթիցն՝ ռամիկ զաւրացն բազմութիւնն դիմեցին ի տուն մոխրանոցին, չմնալով բնաւ աւագացն հրամանի, եւ առեալ զկրակարանն՝ վարեցին ի ջուրսն զկրակսն, որպէս ի գիրկս եղբար, ըստ ասելոյ սուտ վարդապետացն Պարսից. զոր ըմբռնեալ ջրոցն թշնամաբար եւ ոչ եղբայրաբար՝ ծախեցին: 18 Բայց զմոգուցն բազմութիւն պահել առ աւրն հրամայեցին զգուշութեամբ. եւ ի վաղիւն ընդ ծագել⁵ արեւուն արս ի նոցանէ թուով սպանին սրով ի գիւղն, որ կոչի Չարեհաւան:

ԼԳ. Եւ կատարեալ զայս ամենայն գործս ըստ ասելոցս կարգաւ՝ դադարեցին անդէն զաւուրս տալթոյն: 2 Եւ ապա փութացան իջանել յԱյրարատ⁶

1 Զ. կքեալ

2 ԶԱտ. եւ ուխտագանց ի միաբանութենէս

Բ Մատթ. ԻԵ 41

3 Զ. տանուտերոքն

4 ԲԳտ. եպիսկոպոսն

5 ՏՏ. ի ծագել

6 Զ. միշտ արայրատ